Գ–ն, Կ. Կոմիտէի նամակը յանձնում է Անդրանիկին եւ մանրամասն զեկուցում է տալիս:

Անդրանիկը Տոմսոնի նամակը առանալուց յետոյ, աւելորդ է համարում վինուոլական զործողութիւնները չարունակելը եւ զայրացած հետեւեալն է ասում Գ–ին. «Այս բոլորը էն սիկայ Սոկրատ բէկի պատճառով եղաւ, թէ չէ ես վազուց Շուշի կը լինէի»:

Եւ իրօք չատ ճիշդ է նկատել Անդրանիկը: Եթէ Սոկրատ բէկը տասը օրով Անդրանիկի յարձակումը չյետաձգէր կամ վերջին ժամին իրեն յանձնուած ծրագիրը ճշդութեամբ իրագործէր եւ Թիֆու Ջրի բարձունքները բռնէր, այն ժամանակ Անդրանիկը, իր զօրամասով, տասը օր առաջ Շուշի մտած եւ զորանով էլ Ղարաբաղի խնդիրը ընդմիշտ լուծուած կը լինէր, յօդուտ Հայաստանի կառավարութեան:

Անդրանիկը դեռ Ջարուղ չանցած, Շուշուայ թաթարների մեծ մասը, կառքերով ու փուրգոններով իրենց ունեցուածքներն էին տեղափոխում Ելախ. իսկ եթէ Շուշի մտած լինէր, այն ժամանակ քաղաքից ու Աղդամից կը դադրէին:

Անգլիական սպաները իրենց միսիան կատարելուց յետոյ, մի օրով գնում են Գորիս եւ միւս առաւօտեան Գ–ի հետ վերադառնում են Շուշի: Գորիսից նրանց միանում են Զանգեզուրի Ազգային Խորհրդի անդամները՝ Արշակ Տիրինեան եւ Նիկոլայ Յովսէփեան ու անցնում են Բաղու, այնտեղի Ազգային Խորհրդի հետ խորհրդակցելու՝ որոշ խնդիրների մասին:

Այդ սպաները Գորիսից վերադառնալուց յետոյ, Սոկրատ բէկ Մելիք–Շահնազարեանը իր վաշտով վերադառնում է Վարանդայի շրջանը:

Անդրանիկի կռիւներից յետոյ, Հայկասամլուի զրդերը երբ գալիս էին Շուշի, զարմացած պատմում էին Անդրանիկի հերոսութիւնների մասին: Նրանք երդւում էին, թէ ինչպէս Քեարաւուղի ու Մարքիզի դիրքերից երկու հազար զնդակ էին խփել Ջարուղի խճուղու մէջտեղում կանգնած երկու հոգուն, մէկին կը պել էր եւ մեւսին մինչեւ վերջն էլ չէր կը պել:

Երբ զրդերին հասկացնում էինք, որ այդ մարդը Անդրանիկ փաշան է եղել, նրանք հիացած պատասխանում էին՝ «Անդրանիկա փաշա զէյմիչըն, զէյդամբար զէյըն» — Անդրանիկին փաշա մի՛ կոչէք, մարդարէ անուանեցէք: Զրդերի պատմածը միանգամայն ճիշդ էր: Անդրանիկի հեռւից մի քայլ հետաւորութեամբ, գնում է եղել Սահիան Սարգսեանը (Սահսարը):

Անդրանիկը նրան զգուշացրել է, որ չզբնայ իր հետից, կարող է խփուել, բայց Սահսարը, տեսնելով որ Անդրանիկը չի զգուշանում գնդակներից, ինքն էլ է հետեւում փաշային, սակայն մի քայլ հեռաւորութեան վրայ խփուում է:

Երբ կռիւները դադարում են եւ Անդրանիկը անցնում է Գորիս, Սոկրատ բէկը, Գեբասլիի աղայի միջոցով Շուշուայ թաթարների ղեկավար շրջանի մէջ տրամադրութիւն է ըստեղծում, որպէսզի իրեն իր վաշտով հրաւիրեն Շուշի, քաղաքի հայկական մասում մնալու եւ անկարգութիւնները զսպելու:

Այսպէս անելու նպատակն էլ այն է լինում, որ ապագայում կարողանայ Անդրանիկի մօտ արդարանալ, որ ինքը առանց կռուի մտել է Շուշի:

Թաթարներն էլ, տեսնելով որ Սոկրատ բէկը զէպի իրենց բարեացակամ է եւ Անդրանիկի արշաւանքի ժամանակ ապրեցու քայլերի չղմեց, ընտրում են իրենց ներկայացուցիչները՝ բժ. Մէհմանդարովին, Հաջի Մուրթուզու Սաֆարովին (վաճառական) եւ Քեալբալայի Աքպէր բէկին, որոնք պիտի գնային զաւառ եւ Շօշու զիւղում Սոկրատ բէկի հետ տեսակցելուց յետոյ, հրաւիրէին քաղաք: Նախ քան թաթարների ներկայացուցիչների զաւառ անցնելը, Շուշուայ քաղաքացիներից՝ Գրիգոր բէկ Մինասբէկեանը եւ Ա. Սուքիասեանը անցնում են Շօշու զիւղը, նախապատրաստական աշխատանքներ կատարելու: Սակայն երբ նոյն օրերին Շուշի է մտնում անգլիական մի միսիա, թաթար ներկայացուցիչները այլեւս չեն գնում զաւառ:

1918 թ. Նոյեմբերի վերջերին Բաղուից Մայոր Գիբսոնի զլխաւորութեամբ, անգլիական մի միսիա է մտնում Շուշի եւ թաթարների ներկայացուցիչ Աբուլֆաթ բէկ Հասանբէկովին